

Կը զարմանային Վասպուրականի ժողովուրդք այդ Արծրունի Գուրգենին վրայ, որ չէր նմաներ ամենեւին այն միւս Արծրունեաց իւր մերձաւոր ազգականաց, այդ պատերազմի յաղթող առիւծը ոչ ամբարտաւանութիւն ունէր, ոչ յանձնապաստանութիւն եւ ոչ պահանջմունք ի ժողովրդոց: Շատ անգամ կը տեսնէին զինք նստած հասարակ շինականին հետ ընտանեբար կը տեսակցէր, խրատներ կ'ուտար, կը յորդորէր քաջ լինել, վարժուիլ զինաշարութեան, ընկերին օգնել ընդդէմ օտարին, պաշար պահել նեղութեան օրերու համար:

Հասաւ վերջապէս Հայոց Ձորոյ գլուխը Որդոք գիւղը, չորս հարիւր քաջերով, եւ միտքը դրած էր Բերկրի հաստատուած ութմանիկ ըսուածները բնաջինջ ընել, եւ Արծրունեաց քաղաքը մաքրել այդ բարբարոսներու մնացորդներէն: Բայց կը սպասէր գունդերուն, որ պիտի հասնէին, ուստի կ'ելլէր շատ անգամ միայնակ՝ թողած Յուլակին գլուխը՝ ծանր-ծանր կը շրջէր գետին եզերքը, որ այդ լայնատարած ձորը երկուքի կը բաժնէ, եւ որ հռչակաւոր էր եւ միշտ պէտք է լինի հայուն համար, վասնզի հոն եղած է կռիւը, ուր հայոց Նախահայրը առաջին պատերազմը պատերազմեցաւ ազատութեան համար եւ զարկաւ սպաննեց զքել:

Կ'ելլէր այդ միւս լեռներէն շրջապատ եալ բարձր սարին վրայ ուր ժողովուրդը մինչեւ այսօր բերդի մը մնացորդ ակերակ կը նշմարէ եւ զօր Հայկայ բերդ կանուանէ. կը դիտէր այդ Տիտանեանց արժանի ահեղ տաշածոյ քարանց շարքերը, եւ նստած ժայռի մը վրայ կը մտածէր. ինք մեծասիրտ եւ կորովի հսկայ այդ դիւցազն եւ վեհ յիշատակներու առջեւ ինչզգինքը փոքրիկ եւ նկուն կը գտնէր:

Երբ այս մտածութեանց մէջ թաղուած՝ առաւօտ մը՝ միտքը անցեալին վրայ կը շրջագայէր, աչքը դարձուց դէպի Բերկրուոյ կողմը եւ տեսաւ սեւ ամպ մը, որ կը քայլէր, կը մտնէր Աբրահամու անապատը: Շուտ մը ցատկեց Յուլակին վրայ. «Երթանք իմ քաջ Նժդիգս,— ըսաւ,— մենք պիտի երթայինք թշնամին գտնելու, նա կ'ուզայ մեր առաջ, որպէսզի մեր յոգնութիւնը պակաս լինի»: Եւ